

Հանրային պաշտպանների համար կազմակերպվել է աշխատաժողով՝ ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության թեմայով

18.12.2023 11:18



ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հայաստանյան ներկայացուցչության համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում 2023թ. դեկտեմբերի 9-10 հանրային պաշտպանների համար կազմակերպվել է արտագնա վերապատրաստման աշխատաժողով:

Դասընթացները մասնավորապես առնչվել են ապաստանի և դրան առնչվող վարույթներում իրավունքների պաշտպանության հարցերին:

Վերապատրաստումների մեկնարկին բացման խոսքով մասնակիցներին ողջունել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը՝ շնորհակալություն հայտնելով ՄԱԿ ՓՀԳ-ին երկարամյա համագործակցության և Հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացմանը նպաստելու համար: Մասնակիցներին ողջունել է նաև Միջազգային պաշտպանության հարցերով ներկայացուցիչ Յոուսեֆ Դարադքեհին՝ ընդգծելով համագործակցության շարունակականության կարևորությունը:

Աշխատաժողովի ընթացքում բանախոսությամբ հանդես են եկել Հանրային պաշտպանի գրասենյակի ապաստանի հարցերով խորհրդատու-փորձագետ Տաթևիկ Շալջյանը, ՄԱԿ ՓՀԳ ներկայացուցիչներ Մարինե Անտոնյանը և Գայանե Կաբրիլյանց, ինչպես նաև փորձագետ-հոգեբան Մարիամ Մելքունյան:

Դասընթացի շրջանակներում ներկայացվել են ՀՊԳ ապաստանի հարցերով խորհրդատու-փորձագետի կողմից հանրային պաշտպանների համար Ծրագրի շրջանակներում կազմված իրավաբանական օգնության մասին ուղեցույցների նախագծերը, անդրադարձ է կատարվել միջազգային պաշտպանության հիմունքներին, քննարկվել են ոլորտում առկա զարգացումներ և խնդիրները: Աշխատաժողովը ներառել է նաև ապաստան հայցողների և տեղահանված անձանց հետ աշխատանքում բարդություններին և հաղորդակցության հմտություններին առնչվող հարցեր:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```